Հ. ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ.

(Տես յէջ 212)

1009. Խաչափայտ.

ունի ինչ մերձաւորութիւն պաշտելի Յ. Խաչին, սակայն մեր անտիա- պաշտ նախնիք սրբազանացուցեր են այս բոյս, աղօթքով և պատուով, և պէսպէս պանծալի անուամբք . ինչպէս, Հարիւրապաւ, Քահանայա- տակ, Քաջվարդ, Արձիւ- վարդ կամ Արջվարդ, Լրակ- ժիրակ, Կակաչիկ, Շնիարտ կամ Շնիարտ, Նռնանօթուս, Պրվոտակ, Ինպրէք, Յօտի ապրակ. բայց յատ- կագոյն և ստուգագոյն փեներնա, որ այլայլեալ գրուած է եւս Ֆոռ- վանիա, Խառանիա, Փառանիա. Քօղ աւելի օտարոտի անուն- ներ՝ զոր յիշեմք քիչ մի վարը. հին Բժշկարան մեր գրէ միայն « Դուտ ըլ-Ջաիպ , Կպրէքի » տակ, և փեներնա, որ է Խա- չափայտն » . այս կոչման այլ պատճառ կու տայ ուրիշ տեղ, « Որ եթ կտրես՝ մէկն զէդ Խալ » է, որ կոչի յունարէն Փառա- » նիա, և տանկիբէն Ջուտ ըլ- » Ջաիպ » : — փեներնա ա- նուան ստոյգն է լ. Peonia, փ. Peonie, ըստ առասպելաց Ցու- նաց՝ յանուն Պէոն բժշկի, որ այս բոյսը դեղ ըրաւ Հերակլէ- սէն վիրաւորուած Պլուտոնի : Այսպէս նկարագրէ Ֆոռ- վանիա անուամբ՝ որով և Պէյ- թար (Ֆառռանիա, فاونيا) « ինքն « խոտ(եղէն) է , և ծաղիկն կար- » միր է. և ինքն էգ և արձ կու- » լինի. և լաւն այն է որ Հօռմցի » լինի.. Արձին տերեւն նման է » Ընկոյզի տերեւին . և այն որ » էգ է՝ ի ծայրերն զէդ Նչի կե- » զեւի նման աման ունի. և յոր- » ժամ հասանի՝ կարմրուկ հատ- » կներ ունի , զէտ Նռան հա- » տեր. և այն որ արձ է՝ տա- » կին հաստութիւնն մէկ մատին » Շրէշի տակ է », եւ այլն։ Քանի մի անուններ այլ յիշէ, որոց մի



Խաչափայտ.

Քահանայոյն, փոխան Քահանայատակի, յետոյ ի՛աւելցընէ . « Աչանն այսօր տա-

digitised by A.R.A.R.@

» կին՝ զէտ մեռ չափ կու լինի, և յերկայնութիւնն մէկ թիզ կու լինի. և այն որ
» էգ է՝ տակն չատ կու լինի, և ճուղ ճուղ է՝ որպէս կաղնի պտլտ, և եօթն կամ
» ութ հատ կու լինի. որպէս լինի. և յոր տեղ կոտրես՝ զէտ խաչ գտնես մէջն.
» նոյն է և ՀՆինիպոն (!). և այս Պրոտ տակ է, որ հաբիմին Յօհան Պապիսչ ասեն.
» Հա. Պղմիտակն, որ է Օչինդրին տակն։ Եւ թէ յիրք մի չարեն զայն սեւ հունտն՝
» և տղոցն ի վիզն կախեն, օգուտ ընտասորին... և այնոց որ յանկայր վայրկեն
» չուրլ գան՝ ի վիզն կախեն, չատ օգուտ. և թէ այս չգտովի՝ իր փոխանն Ղռան
» կեղեւն է, և վարտամանն է. և Ղոլ ? (Ղոլր ?) կայինի կ'ասեն եղն մի կոչ՝
» այն է, և նորա կրանկն է, և նորա ոտից ղոլին ոսկրն է փոխանն։ Պէյթար՝
եղին կամ եղջերուի տեղ՝ վիթ (gazelle) և կղնաքիս (martre) կ'ըսէ։

Վերինն նուսխաներն քիչ քիչ բնականէն ի դերթնականն առալնորդեցին. — ար ատեն այս կարծիքն, այսինքն փենունայի հրաշալի զօրութեան՝ մտեր էր մեր նախնեաց խեղապատակին մէջ. չի կըրնար տուգուիլ, բայց եթէ շատ հին է ըսել, ինչպէս Լուսնի Թուփին և Լօյտակի աւանդութիւնքն, մանաւանդ որ նոյնպիսի երեւակայութիւնք ուրիշ ազգաց և ինչուան Պլինիոսի գրոց-մէջ այլ գտուին ի հնուց։ Մեր գլխաւոր առակաբան (Մխ. Գօշ) ճի դարուն վերջերը՝ կու յիշէ այս բուսոյ (զոր փենիս կ'անուանէ) դիւահալած զօրութիւնը, որպ՝ կարծես թէ՝ կու հաւատայ. « Փենիս՝ զանձն սրբասէր ասէր լինել, և ամարհաւաճէր ի » բնաւից, իբրու զի ընդդիմանայ դիւաց, ոչ գիտելով եթէ ի թագաւորէն իւրմէ » զօրանայ. և յինքն ամիսփոխեալ տրքայի դիւրն ներգոյ, գտաւ ունայն քան զրա- » զումս. վասն զի ծաղիկք ամենայն ի պէտս վարէին բժշկաց, իսկ նա և ոչ » բնաւ. »։ — Ղեւրօլի մէջ՝ եթէ յիչեալ սնոտիապատութեան իբրեւ կանոնական կամ մասնաւոր կարգն այլ յառալ բերելոյ, գոնէ հնութեանն համար, որ թուականէ մէջը 600 տարի առալ գրուած է մեր հին Բժշկարանի մէջն, (յամի 1294)։

« փենուռնա հանելոյ նշանք. Խոտ մի է որ կոչի Փենուռնա և ունանք ասեն (յիչէ զանազան անուններըը), այլք Ոպոնիա, ոմանք Դիոդիմիաք, այլք Ոդիոտաան, և » ինքն կոպրէն է, և ամենայն իրաց օգուտ։ Թէ ծնեալ յիրմէ՝ պատահարի օգտէ » և լեզուանոյ. ի հետն ունենալ՝ ի կախարդէ չվախէ, ի դժար ճամբայն անահ » անցնի. զտակն և զտերեւն ծխէ, դեւք չմնանն ի տունն. զպտուղն թէ գինով » տան՝ պատահարի և ական (աչքի լեռս) օգտէ։ Եւ է այսպէս. երթայր Մով- » սէս ի Սինա, և զոքանչ նորա տագնապէր ի գիւէ. և հրեչտակ Աստուծոյ ե- » ցոյց զթնենունայն, և բժշկեցաւ կինն։ — Եւ իր հանելն այսպէս է. երթայ » քահանայն խաչէ և աւետարանաւ և ասղոսիւ, ողիցն տայ խոտին, և ասէ » ՝Ի՝. ասղմոսն, Ողորմեա ինձ Աստուած։ Աղօթք, Օրհնեալ ես Տէր Ա- » տուած, որ արարեր զերկինս և զերկիր, և վասն արգարոյն Մովսէսի չնորհեցեր » զոա ի բժշկութիւն. կարգամք առ քեզ, Տէր Սարաւոթ, տուր զօրութիւն » փենունայիս. զի ի քէն է զօրութիւն, և քեզ փառք յաւիտեանս։ Եւ այլ ասա » զնոյն Սաղմոս Ի՝. և կարդան Աւաքեալ և Աւետարան, և քարոզ՝ խնդրեսցուք. » Հայր մեր։ Դու Տէր Աստուած, արարիչ ամենայն արարածոց, որ զարդարե- » ցեր զմարդն առաքինի անապական. զոր նախանձեալ չարն՝ խաբեաց զնորա- » միտ կինն, հալածմամբ պղտղն. և ելեալ ի դրախտէն անկաս յերկիր անիծից » և ցաւոց. և աղաղակեցին առ քեզ, Տէր, և ցուցեր նոցա ծաղիկս և պտուղս, » խոտս և արմատս ի բժշկութիւն մարդկան. եւտուր և զզօրութիւն չնորհի քո ի » փենունայս յայս՝ ի ձեռն ծառայի քո մեծին Մովսէսի։ Արդ, աղաչեմք զքեզ, » Տէր, տուր չնորհս բժշկութեան փենունային այսմիկ, ի հալածանս նախարարաց, » և ի բժշկութիւն ախտից ցնաւասկարաց. և քեզ փառք յաւիտեանս։ Եւ այլ » Սաղմոս զը, Զաղորմութիւնս քո՝ Տէր, յաւիտեան, ի լման (ամբողջ ըսել, յե- » տոյ աղօթք.) Աստուած կենդանի և բարձրեալ, արեգական, երկիր, ծով, ցա-

---

1. Ասպէս գրուած, փոխանակ Ձնդրիոյին։

digitised by A.R.A.R.@

» մաք. և ամենայն վայելչութիւնք կարդան առ քեզ. տուր, ՏԷր, զարմանս այս
» ի ժշկութիւն մարդկան, զի դու ես Թագաւոր ամենայն արարածոց և բոլոց,
» և ի ձեռս քո է ամենայն. և դու պահես յամենայն փորձութեանց. և քեզ
» փառք յաւիտեանս. — Եւ ապա փորեն և հանեն, որ ի տակէն չինայ ի տեղն,
» և սրբութեամբ կալ գնա. զեւք սարսեն ի նմանէ, և ամենայն ախտք դիւա-
» կանք. ի մահկեղծ՝ զեղծաւէ է. ուր գնես յանդաստանս՝ պահէ ի կարկըտէ
» և յամենայն ցաւմանէ. ի տուն որ կենայ՝ չար չմտանէ. ներքեւ սնարուցն դիր,
» լավ երազ տեսանես. — զպտուղն առ քեզ կալ. ի չարէ չվախես: Թէ մեղրով
» տասՙ ամենայն ցաւէ օգտՙ մարդոյ և անասնոյ. կանանց զկաթն չատցընէ. օգտէ
» և օձահարիւ. Տղային տուր յառաջ քան զառաջին կաթն, բնաւ չդիպի չարի,
» և Թէ առ քեզ ունիսա՝ չընաեն քեզ օձ և գազանք. Թէ մեղրով տաս ձր օր,
» զդոյնն կարմրցընէ. Թէ ի տուն ծախս՝ կախարդութիւնն ի վայր ընկնի: Եւ ա-
» մենայն իրաց օգտակար է, կարողութեամբն Աստուծոյ »: — Զգարմանանք
մեր այնոցն զդէպ երկար գրուածոց Գենուայի համար, մինչ արեւմտեան այլ
իրենց Betonica՝ համար առանձին զրոյկ կամ տետրակ հրատարակած են: —
Աչքաչափ խնամքով չարգութեամբ ստուգագրուած բոլոր հարկ էր որ մեր երկրին
մէջ այլ գտուի, որոյ Թէպէտ յատուկ տեղն չի յիշուիր, ինչպէս Համասփիւռ ծաղ-
կին, բայց ստար գիտական տեղաքննիչք նշանակեն, Կրաստերեւ (Paeonia Te-
nuifolia) և կարմրորակ կամ Խոտարային (P. Corallina) կոչուած տեսակներն
ի Ռ-Հ. իսկ Ծառ կամ Վայնագան P. Peregrina տեսակն՝ ի Պարխար լերինս
մտ ի Խաբերդ, այլ և ի Վան, Բաղէշ, Պինկէօլ, Ծրանախ:

1061. Խիրու ծառ.

Ամիրտ. զուգէ զայս Աւր. Ֆաղրամ كبكر, կոչուածին. « Խիրուն ծառն է, և
» կամ կեղեւն է, և տաք է. և ասացած է՝ Թէ իր խէժն է »: Փռանկ Քարտգանն
զՖամքամ համարի Térebenthine, որ է Բեւեհնի: Ցիշուի և Խիրու Ջէր, որ կամ
նոյն է ընդ խէժին, կամ վերոյգրեալ ծաղկանց հիւթն.

1064. Խլեփ. Խլէֆ.

Աւր. խիտաֆ, خلاف Լ. Salyx Egyptiaca կամ Salice odorosa, Փ. Saule d'Egypte.
Ըստ Ամիրտ. Ք. Յորդանն կ'ասէ. Հայն Ռուի ասէ, (բայց հմտասուր Ռուի)-յան այն է
» որ դեղին ծաղիկ ունենայ... իր հասն զսիրուն յուժժվցընէ, և իր ձէթին զատանգն
» յուժժվցընէ... Աւտ Պտ. Թէ սաղ տերեւին Ցաֆտաֆ կ'ասեն և Պ. Պիտ, կու ասէ,
« և Պալխիքն (Պահլաւք) Պահրաման կ'ասեն. և իր խէժն իր տերեւէն կ'ելնայ.
» և յան այն է որ ի Իրեզերք լինի: — Մեր նոր գրողք այլ և տեսողք (Նաթան. 93)
վկայեն որ Խլեփն անուշահամ Ռուի է: — Հին Բժշկարանն՝ Մանր Երդոյի այլ ա-
նուանէ զԽլէֆն նմանցընելով Երդոյի ծառին կամ Երդուտի (տես Ք. 666) կամ
նոցանցընելով: — Մեր Հերացի այլ յիշէ (եր. 67) ցուցած գլխոյ գեղ գրելով.
« Ալիկ.. Խլեփն. այն մանուր Ռւաենքէն են՝ որ անուշ հոտ գայ իւրմէն, և Վարդի
» ըսեր », եւայլն: Իսկ վաստակոց գիրքն (ՍԸ) ըստ հին Բժշկարանի նոցանցընէ
ընդ Երդոյ. երբ կանկառը անուշահամ ընելու համար խրատէ անոր հունցը գնել՝
զատ յայլոց, ի ըսր « Երդոյն, այսինքն ի Խլեֆին, երեք օր յաչունն ի Քրիջց գիր ».
Եւ այլն: — Ամիրտ. Խլեփի տերեւին համար ըսաւ Թէ կոչուի Ցաֆտաֆ, սակայն
ունինք ի բուսաբաններց գծառն այլ այնպէս կոչեն, Լ. Salix Safsaf.

1072. Խնդակոմ. Մոլեխխնդ. Խնդամոլի. Խնդամոլիկ.

Այս բարդեալ բառից նախատրեն է Խինդ զոր քանի մ'անուն առաջ յիչե-
ցինք (Բ. 1057). իսկ ասոնց առաջինն վերջի երկուքէն արդեօք սոսրբիր է Թէ նոյն,
կամ Թէ կըրնար զանազանիլ, մէկը յարմարցընելով Լ. Conium, Փ. Ciguë, ին.

digitised by A.R.A.R.@

Омегъ կամ Болиголовъ կոչուածին, միւսն կամ միւսներըն՝ Cicuta, ֆ. Ciceutaire, ֆ. Водяной омегъ կոչուածին, փափագելի էր որոշել և ասկնաեել։ Բայց մեր նախնեաց գործածութեան մէջ անգամագան կ'երեւի. մանաւանդ երկու տեսակէն այլ համացեղ ըլլալով (Հովանեկաւորաց ցեղէն), թէ և գիտնա- կանք կու նշմարեն տարբերութիւններ ի մէջս և ի մնացնա. մեկուս պըտուղն աւելի կլորկիկ է, միսն աւելի երկայնձեւ, երկուքն այլ դըրսէն չերտ մ'ունին ի գիրս նախնեաց Ոսկիբերանի Եսայեայ մեկնութեան թարգմանչին գրէ (եր. 424), « Իբրեւ թմբիր ինչ առեալ կամ կոնխոն » (ց. Кожлоу), որ է Խնդակոթ ». այսօր տեսակն » որոշելու համար ֆ. Grande Ciguë կոչեն, հարկաւ միւս մ'այլ Petite Ciguë. — Վանական Վ. իր Հարցմանց մէջ կ'ըսէ. « Մոլեխինդն խոտ է, » ցօղուն առնէ որպէս այն որ Պտակիդ են յատկ » (Peganum), պտուղն որպէս զմանր Պատին- » ճան. մահաբեր է մարդոյ ». — Եւ ծր պատ- մագիտ չի յիշեր Սոկրատայ մահը, որոյ յիշատակէն անթաւճան է այս մահաբեր բոյսն. և ծր հայագէտ իր մեծ պատմչին բանջը (Խոր. Բ. ԿԶ), իրենց մեծագոյն և սրբագոյն Թագաւորին (Տրդատայ) համար, որոյ՝ ապերախտ պատճառեալք՝ « տան » արքունի, որպէս անդ ուրեմն ի հինան Ա.քենա- » ցիքն՝ Սոկրատայ զՄոլեխինդն » ։ ։ ։ — Հին բժշկարան մեր՝ որ շատ կանոնաւոր և ուղիղ գը- բուածէ, զարմանք, այս անուան մէկ գիրը (Քեր- եւս հնագոյն օրինակի մի այլաձեւ գրութեան հետեւելով՝ կու գրէ. « կոնխոն, խնգամոյի, փրի- » փա ? » և ուրիշ տեղ այլ իբրեւ գիտութեամբ » նոյնպէս գրէ խնկաւոյդ տակ ։։ Թողլով զայս անոր՝ տեսնեմք ինչ գրէ մեր Ամասացին։



Խնդակոթ.

Սա Ա.ր. Շուքրան, شوكران, բառին ներքեւ կ'ըսէ. « Շավդարան, որ է Հոչ- » տուտն ? (կամ Հուդուտուտ) և Հելենացոց բառովն՝ Միխոնին ? » — ց. Միքոն Mr'kon, խոխաչ նշանակէ. — « Շավդարան-ին այլ՝ որ ք. Փայտրան ասէ (և կ'աւելցընէ թէ ըզքերէն, թէ ցօղունն Իւթիանի նման ծունկ ծունկ կամ կապ կապ » է, տերեւն բարակուկ) և իր հունտն ի Նախիաս կու նմանի. լաւն այն է որ » նոր լինի. զմարն հարբեցընէ. և իր քաղուքն զմանն կու տանի յերեսէն... » և Թէ զմայն փետեն և յայն տեղն Շավդարան քաշեն, և կամ տիմէտ առնեն, » ի յայն տեղն այլ մաղ չի բուսանի... Իսն ասէ, Թէ ինքն խոտ-ին է որ իր ծառն » (բայսն) Ըզգիանի ծառ կու նմանի, և ծաղիկն սպիտակ կու լինի, և խոտ » խորուկ չի մնձուր ի գետինն. և հունտն յԱնիսոն կու նմանի. և տանի փոտ » կու լինի... Եւ բժշկապետքն ասեր են, Թէ այս խոտէս ոչ ուտեն և ոչ խմեն, որ » գիտէքն կու տանի, և զմարդն կու սպանէ. և կու պիտի որ Ոչինդր և Պըղ- » պեղ և Կղրու. ձու և Յաղագ խմեն (որ) զվնասն խաղացընէ ։։ Իրմէ հազար տարի առաջ գրէր մեր մեծ վարդապետն Եղնիկ. « Մոլոխինդ՝ որ ասանձինն » ի յայտնի ինչ ժամանակի սպանող է, նովիմբ զմազձս հնացեալս՝ հնարին բժշիկք՝ » հատանել ։։ Այնուհետ աւելի անվնաս տեսանն պիտի ըլլայ Թաթարաց անապատաձերուն մէջ, զոր իտալացի տեղագիրն ձե դարու՝ Յովսէփ Բարբարոյ, անուց հացի տեղ ծառայէ կ'ըսէ, և Թէ չգտնէին՝ անօթութենէ կու մեռանէին։ — ինչպէս շատք ի բուսոց՝ այս այլ ունի իր հիւանդանոցին. (տես Թ. 849)։

digitised by A.R.A.R.@